ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

02 դեկտեմբեր 2014 թվական N25-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի և 12-րդ հոդվածի 4-րդ մասով.

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Արուճ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 2-ի արտահերթ նիստի օրակարգը:

1.Արուճ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմը հաստատելու մասին:

2«.Արուճի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրականընկերության վերակազմավորման արդյունքում «Արուճի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Մուշեղ Ղազարյան

2.Երվանդ Մանուկյան

3.Արշակ Մանուկյան

4.Կորյուն Հովհաննիսյան

5.Գեղամ Կարապետյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

02 դեկտեմբեր 2014 թվական N 26-Ա

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղականինքնակառավարմանմասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշեց

Հաստատել Արուճ համայնքի ղեկավարի և գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմը համաձայն հավելվածի:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Մուշեղ Ղազարյան

2.Արշակ Մանուկյան

3.Երվանդ Մանուկյան

4.Կորյուն Հովհաննիսյան

5.Գեղամ Կարապետյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԱՐՈՒՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

02 դեկտեմբեր 2014 թվական N 27-Ա

«ԱՐՈՒՃԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ « ԱՐՈՒՃԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության«Քաղաքացիական օրենսգրքի»63-րդ հոդվածի 1-ին մասով,«Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 14-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 24 –րդ հոդվածի առաջին մասի դրույթներով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1.«Արուճի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը/այսուհետ՝ՓԲԸ/ վերակազմավորման ձևով վերակազմակերպել « Արուճի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության/այսուհետ՝ՀՈԱԿ/:

2.Հաստատել« Արուճի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման կարգը, պայմանները, տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի մարման կարգը.՝

3. Հաստատել « Արուճի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության գույքին գույքային իրավունքների՝ «Արուճի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ:

4.Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված « Արուճի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

5. Ընկերության կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող շենքերն ու շինությունները, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմաններով՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Արուճի գյուղական համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

6.Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած« Արուճի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

7.Կազմակերպության կառավարման, ինչպես նաև«Պետական ոչ առևտրայի կազմակերպությունների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասի «է»ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետություն Արագածոտնի մարզի Արուճ գյուղական համայնքի ղեկավարին:

8. « Արուճի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ ընկերության պարտատատերերի առկայության դեպքում բոլորին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին:

ԱՎԱԳԱՆԻՆԵՐ՝

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1.Արշակ Մանուկյան

2.Մուշեղ Ղազարյան

3.Երվանդ Մանուկյան

4. Կորյուն Հովհաննիսյան

5.Գեղամ Կարապետյան

Արուճ համայնքի ղեկավար Բ.Մարտիրոսյան